ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի նոր մարզադպրոցի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–15/38Հ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2015 թվականի նոյեմբերի 26-ին կնքված N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–15/38Հ պայմանագրում 2018 թվականի դեկտեմբերի 20-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	Կատարողի կողմից ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացրած գրությունը և պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացրած առաջարկությունը:
Փոփոխության նկարագրություն	ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի նոր մարզադպրոցի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կնքված ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–15/38Հ պայմանագրի կատարման համար կանխավճարի տրամադրում:
Փոփոխության հիմնավորում	N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–15/38Հ պայմանագրի 7.3 կետ:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 5

26.11.2015թ. կնքված N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–15/38Հ գնման պայմանագրի

ք. Երևան 20.12.2018թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ԵՐՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Ռ. Ավագյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի նոր մարզադպրոցի կառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 26.11.2015թ. կնքված N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–15/38Հ գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.3 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի 16.02.2018թ. կնքված N 4 համաձայնագրի 1-ին կետում ավելացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

<<1.3 2018 թվականի համար վճարման ենթակա գումարից մինչև **172 240 (մեկ հարյուր յոթանասուներկու հազար երկու հարյուր քառասուն)** ՀՀ դրամի չափով՝ Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով՝ ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության ամբողջ գումարի չափով:>>:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011012706, ՀՎՀՀ 02565827	<<ԵՐՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ ք. Էջմիածին, Տերյան փ. 971/7 <<Արդշինբանկ>> ՓԲԸ Էջմիածին մ/ճ Հ/Հ 2475905962160000 ՀՎՀՀ 04722601
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
(ստորագրություն) Ա. Մկրտչյան	(ստորագրություն) Ռ. Ավագյան
Կ.Տ.	Կ.Տ.